



ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կայուն զարգացմանն առնչվող՝ Լիդիան ընկերության պարտավորությունը

Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ ընկերությունը և վերջինիս կողմից վերահսկվող դուստր ձեռնարկությունները («Ընկերություն» կամ «Լիդիան») ձգտում են կայուն զարգացման¹ և պարտավորվում են Ծրագրի զարգացման և շահագործման բոլոր փուլերի ընթացակարգերում ներառել բնապահպանական, առողջապահության, աշխատանքային անվտանգության, սոցիալական և անվտանգության հարցերը:

Այս հանձնառության շրջանակներում Լիդիանի կողմից մշակվել են քաղաքականություններ, որոնք ուղղված են Ընկերության գործունեության տարածքում գտնվող շահագրգիռ կողմերի և շրջակա միջավայրի պաշտպանությանը:

Ընկերության բնապահպանական քաղաքականություն

Լիդիանն ընդունում է իր գործունեությամբ պայմանավորված շրջակա միջավայրի վրա ազդեցության հավանականությունը և հետևաբար պարտավորվում է միջազգայնորեն ճանաչված լավագույն փորձին համապատասխան նվազագույնին հասցնել և մեղմել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները: Սույն Բնապահպանական քաղաքականության հրապարակումը սահմանում և փաստում է այդ պարտավորությունը:

Բնապահպանական առաջնային խնդիրները և մտահոգությունները թափանցիկ, միահամուռ ուժերով, բաց և կառուցողական եղանակով կարգավորելու նպատակով՝ Ընկերությունը նախատեսում է համագործակցել կանոնակարգող մարմինների և այլ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ Ծրագրի ազդակիր համայնքների հետ:

Կայուն զարգացման արդյունքների ապահովման իր հանձնառության շրջանակներում Լիդիան ընկերությունը բավարար ռեսուրսներ կներդնի իր բոլոր աշխատանքների նախագծման, շինարարության, շահագործման և փակման ընթացքում բնապահպանական կառավարման պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Սա ներառում է ճկուն կառավարման գործընթաց, որը կիրականացվի շարունակական բնապահպանական մոնիթորինգի միջոցով, ինչպես նաև մեղմացման մեխանիզմի պատշաճ կիրառում, որտեղ շեշտը դրվում է սկզբնաղբյուրում բացասական ազդեցության վերացման վրա:

Սույն Բնապահպանական քաղաքականությանը զուգահեռ Ընկերությունը մշակել է Բնապահպանական կառավարման համակարգ և հարակից պլաններ ու ընթացակարգեր՝ հիմնական պարտավորությունների կատարման համար ուղղորդում ապահովելու նպատակով: Սա ներառում է Բնապահպանական նախագծման չափորոշիչ, Կենսաբազմազանության և ջրի կառավարում:

¹ «Գործընթաց, որտեղ հաշվի են առնվում ներկայիս պահանջները՝ չգրկելով գալիք սերունդներին իրենց պահանջները բավարարելու հնարավորությունից:»

Բնապահպանական նախագծման չափորոշիչ

Մշակված նախագծային լուծումների նպատակն է՝

- Հաշվի առնել ռիսկերի կառավարման սկզբունքների հիերարխիան
- Ներդնել նոր ընթացակարգեր, ենթակառուցվածքներ կամ միջոցներ, որոնք կնվազեցնեն ազդեցությունը
- Փոփոխությունների կառավարումը պարտադիր է Օրագրի բոլոր բաղադրիչների համար, այդ թվում նաև Ռիսկերի/Վտանգավոր արտադրական գործոնների և վերահսկման գործողությունների ցանկի կազմումը:

Ջրի կառավարում

Լիդիան ընկերությունն ընդունում է ջրային ռեսուրսների պահպանման ու պատասխանատու կառավարման կարևորությունը՝ դիտարկելով այն բիզնեսին, շրջակա միջավայրին և հասարակությանն առնչվող հիմնական խնդիր: Ուստի Ընկերությունը նպատակ ունի մշակել ծրագրեր, որոնք չեն որակազրկի ջրային ռեսուրսները և դրանցից կախված էկոհամակարգերը: Լիդիանը պարտավորվում է արդեն իսկ նախագծման փուլում նվազագույնի հասցնել ջրի օգտագործումը յուրաքանչյուր նոր ծրագրի հետախուզման, շինարարության, շահագործման, փակման ու վերականգնման ընթացքում:

Կենսաբազմազանության կառավարում

Կենսաբազմազանության մասով Լիդիանը որդեգրել է պատասխանատու կառավարման մոտեցում: Մասնավորապես, իր գործունեության արդյունքում Լիդիանը ձգտում է ապահովել կենսաբազմազանության կամ առաջնային էկոհամակարգերի ծառայությունների «Զրոյական վնաս»: Լիդիանը պարտավորվել է կենսաբազմազանության պահպանության միջոցառումներ ներառել իր բոլոր գործողություններում:

Համապատասխանություն

Ընկերությունն իր գործունեությունը կնախագծի և կիրականացնի բնապահպանական խնդիրներին առնչվող Հայաստանի Հանրապետության համապատասխան տեղական և պետական օրենքների ու կանոնակարգերի համաձայն՝ միաժամանակ հետևելով Համաշխարհային բանկի խմբի/Միջազգային ֆինանսական կորպորացիայի և Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի պահանջներին: Լիդիանը պահանջում է իր խորհրդատուներից, կապալառուներից, մատակարարներից և դուստր ձեռնարկություններից առաջնորդվել սույն բնապահպանական քաղաքականության սկզբունքներով:

Տեղեկատվության ապահովում և իրազեկվածություն

Ընկերությունը պարտավորվում է սույն քաղաքականությունը ներկայացնել իր աշխատակիցներին, կապալառուներին և մատակարարներին՝ վերջիններիս պարտականությունների և Ընկերության պարտավորությունների վերաբերյալ իրենց իրազեկվածությունն ապահովելու նպատակով: Ընկերությունը անձնակազմի համար կանցկացնի վերապատրաստման դասընթացներ՝ քաղաքականության պահանջների վերաբերյալ իրազեկմանը և դրանց ճիշտ կիրառմանը նպաստելու նպատակով: Լիդիանը իր կապալառուներից ևս ակնկալում է նման միջոցառումների կիրառում:

Շարունակական բարելավում

Ընկերությունը պարբերաբար կվերանայի իր բնապահպանական քաղաքականությունը և անհրաժեշտության դեպքում այն կթարմացնի: Ընկերությունը պարբերաբար կթարմացնի կամ կբարելավի նաև իր բնապահպանական, սոցիալական, առողջապահական և աշխատանքային անվտանգության կառավարման համակարգը՝ պարբերական, համակարգված, ներքին բնապահպանական աուդիտի միջոցով: Աուդիտի արդյունքները կօգտագործվեն ավելի ճկուն կառավարման գործընթացի միջոցով բնապահպանական գործունեության շարունակական բարելավում ապահովելու համար:

Սույն քաղաքականությունը Տնօրենների խորհրդի կողմից հաստատվել է 2018թ. օգոստոսի 14-ին: